ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2021-2023թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-հունիս)

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %







Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2023թ. հունվար-հունիսին 2022թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 111.4%, 2022թ. հունվար-հունիսին 2021թ.նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 111.8 %, իսկ 2021թ. հունվար-հունիսինյ 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 105.1%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ.հուվար-հունիսին կազմել է1 տրլն167 մլրդ 535 մլն դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 29 մլրդ 104 մլն դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 131 մլրդ 15.3մլն դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-հունիսին կազմել է 174 մլրդ 155.4 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 25 մլրդ 124.8 մլն և 48 մլրդ 556.2 մլն դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2023թ. հունվար-հունիսին կազմել է 2 տրիլիոն 280 մլրդ 859.8 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 480 մլրդ 754 մլն և 809 մլրդ 615.5 մլն դրամով, իսկ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հունվար-հունիսին կազմել է 1 տրիլիոն 431 մլրդ 313,1 մլն դրամ, ինչը 2022 և 2021թթ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 297 մլրդ 984,9 մլն և 569 մլրդ 576,2 մլն դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-հունիսին 2022թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 101.0%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 105.8%-ի և 102.1%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2023թ. հունվար-հունիսին 2022թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 117 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 112,7 %-ի և 110.8-ի %-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Առևտրի շրջանառության իրական աճը 2023թ. հունվար-հունիսին 2022թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 123.6%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 110.7 %-ի և 108.0 %-ի պարագայում. իսկ այլ ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-հունիսին 2022թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 116.8%, 2022 և 2021 թվականների ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 126.9%-ի և 102.7 %-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հունվար-հունիսին կազմել է 228 մլրդ 624 մլն դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 66 մլրդ 799.1 մլն դրամով, 2021 թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 70 մլրդ 908.1 մլն դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-հունիսին կազմել է 765 մլրդ 128. 4 մլն դրամ, ինչը 2022 թ և 2021 թ նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է՝ համապատասխանաբար 46 մլրդ 236.8 մլն և 175 մլրդ 185.7 մլն դրամով: Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը 2023թ. հունվար-հունիսին կազմել է 159 մլրդ 697.8 մլն դրամ, (ընթացիկ գներով), ինչը 2022թ. ցուցանիշից պակաս է 7 մլրդ 78.7 մլն դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 23մլրդ 306.4 մլն դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-հունիսին կազմել է 14մլրդ 84.8 մլն դրամ, ինչը 2022թ. և 2021թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 1 մլրդ 536.7 մլն և 3 մլրդ 431.3 մլն դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-հունիսին 2022թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 93.1%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 89.7%-ի և 107.2 %-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-հունիսին 2022թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 104.3 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 115.1 %-ի և 98.9 %-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-հունիսին 2022թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 100.2 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 101 %-ի և 109.5 %-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-հունիսին 2022թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 108.6 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.7%-ի և 105.6 %-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ





Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-հունիսին կազմել է 133 մլրդ 571,9մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 8 մլրդ, 256.9 մլն և 12 մլրդ 153.2 մլն դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-հունիսին կազմել է 303 մլրդ 468.4մլն դրամ, ինչը 2022թ. և 2021 թ,ի նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համա պատասխանաբար 110 մլրդ 145,1 մլն և 151 մլրդ 373.7 մլն դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-հունիսին կազմել է 380 մլրդ 925.9 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանա կաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 39 մլրդ 289.9մլն և 147 մլրդ 885 մլն դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-հունիսին 2022թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 106,2%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 106.1 %-ի և 63.9%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-հունիսին 2022թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 156,8 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 127.2 % և 112,7%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-հունիսին 2022թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 96.5 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 138.7%-ի և 103.1%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2023թ. հունիսին 2022թ. հունիսի նկատմամբ կազմել է 104.2%, 2022թ. հունիսին 2021թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 108.1%, 2021թ. հունիսին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 105.5%: ՍԳԻ-ն 2023թ. հունիսին 2022թ. դեկտեմբերի նկատմամբ կազմել է 97.7%, 2022թ. հունիսին 2021թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 106.3%, 2021թ. մայիսին 2020թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 103,8%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2023թ. հունիսի վերջի դրությամբ կազմել է 1 տրլ 187 մլրդ 335 մլն դրամ, ինչը 159 մլրդ 953 մլն դրամով կամ 15.6 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 56 մլրդ 33 մլն դրամով կամ 4,35%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2023թ. հունիսի վերջի դրությամբ կազմել է 64334 մարդ, ինչը 13265 մարդով կամ 17.1%-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 25996 մարդով կամ 28.8%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2023թ. հունիսի դրությամբ կազմել է 44931 մարդ, ինչը 8608 մարդով կամ 15.8 %-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 16725 մարդով կամ 27.1 %-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)



ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)



Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ



Պետական բյուջեի պակասուրդը/հավելուրդը և դրա ֆինասավորման աղբյուրները, ընթացիք գներով, մլն դրամ



Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2023թ. հունվար-հունիսին կազմել է 8 մլրդ 899.7 մլն. դոլար, ինչը 3 մլրդ 752.3 մլն դոլարով կամ 72.9%-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 5 մլրդ 320. 6 մլն. դոլարով 148.7 %-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի հաշվեկշիռը 2023թ. հունիսին կազմել է - 2 մլրդ 366.5 մլն դոլար, ինչը 1 մլրդ 0.4 մլն դոլարով կամ 73 .2 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 1 մլրդ 547.5 մլն դոլարով կամ 188.9 %-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2023թ. հունիսին կազմել է 3 մլրդ.266.6 մլն դոլար, ինչը 1 մլրդ 376 մլն.դոլարով կամ 72.8 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 1 մլրդ 886.5 մլն դոլարով կամ 136.7%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2023թ. հունիսին կազմել է 5 մլրդ 633.1 մլն դոլար, ինչը 2 մլրդ 376 .3 մլն. դոլարով կամ 73 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 3 մլրդ 434.1 մլն դոլարով կամ 156.2 %-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2023թ. հունվար-հունիսին կազմել է 261376դրամ, ինչը 42735 դրամով կամ 19.5 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 64936 դրամով կամ 33.1%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2023թ. հունվար-հունիսին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 134 մլրդ 680.6 մլն դրամ, ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝-3 մլրդ 682.2 մլն դրամ, արտաքին աղբյուր ների հաշվին ֆինանսավորումը՝ -130,998.2 մլն դրամ: 2022թ. հունվար-մայիսին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 72 մլրդ 413.2 մլն դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 19,315.3 և -91,728.5 մլն դրամ: 2021թ. հունվար-հունիսին պետական բյուջեի պակասուրդը կազմել է -75մլրդ 478.1 մլն դրամ, ընդ որում ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -202,144.5 և 277,622.6 մլն դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ